պատին վրայ կը գրուի խաչքար մը հետեւեալ արձանագրութիւնով.

«Ի պատրիարքութեան տեառն Պետրոսի Նորապսակ արհիեպիսկոպոսապետի, յախճապակեցաւ բոլոր տաճարս Ս. Էջմիածնի Պաշպաղիրկեաննեան մահտեսի Յովհաննէսի, որ է տեղեաւ Կեսարացի և է յիշատակ խոհեմագոյն աղայի, և վասն իւր հոգւոյն կենդանի, և երկու որդւոյն Կարապետի և Սարգսի, և իր ննջեցելոց հոգւոյն համայնի, և որ հանդիպիք երկրպագանել սրբոյ խաչիս, ընթերցողքդ ասացէք մեղայիւ մի ողորմիա, Աստուած զձեզ ողորմեսցի. ի թվին ՌՄԽԳ (=1794)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ Պճ. ՃՕՍԼԻՆ.— (1332—1341). Ներսես աբ. Կրակցի իր ՉՁԳ (=1334) թուին ընդօրինակած Ճաշոցին մէջ կը յիշատակէ Յովհաննէս պտրք. Ճօսլինը. ահա յիշատակարանին անոր վերաբերեալ մասը. «գրեցաւ ձեռամբ Ներսէս Կրակցիի. ի հայկազունս թուականի ՉՁԳ (=1334) ի վանս Ստեփանի.... ի յառաջնորդութեան Երուսաղէմի տէր Յովհաննէսի. որ աւելի անուն Ճօսլին կոչի։»

ՅՈՎՀԱՆՆԷՍ Պճ. ԼԵՀԱՑԻ.— (1381—1385). (Ցպէ. էջ 46)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ Պճ.— (1441—1445) (Ցպէ. էջ 49)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ Պճ. ՄԸՍԸՐՑԻ.— Որ կը կոչուի Թաւիլ. (1479—1491) (Ցպէ. էջ 50) (ՄՁ. Թ. 27)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ Պճ. ՊՈԼՍԵՑԻ.— (1684—1697). ծնողքը Անդրէաս քհ. և Մանիշակի Օղիսա. աշկ. Թէոդորոս պտրք. Տարոնեցիին. կը միաբանակցի ՌՂ (=1641ին) և կը ձեռնադրուի սրկ. Գրիգոր պտրք. Պարոնտէրէն, ՌՃԱ (=1652) աբ. Ածատուր. պատրիարքէն, կը գահակալէ 1685ին (ՄՁ. Թ. 30). 1692ին Ս. Յակոբի վանքին մօտը կը գնէ ընդարձակ գետին մը, որուն վրայ յետոյ կը շինուի Պաղչէ և Ջամ կոչուած ուխտաւորական թաղերը. աղջկանց վարժարանը, դարբնոցը, տպարանը եւ պարտէզը։ 1691ին կը թղթակցի Լիվոռնիոյ գլխաւոր ազգայիններէն Մաթուս աղայի հետ (Սրգս. Ցուց. էջ 1240)։ 1692ին կը նորոգէ նաև Ս. Փրկչի վանքը և կը բարձրացնէ անոր պարիսպը դրացիներուն յարձակումներէն ազատ մնալու համար (ՄՁ. Թ. 228 և Թ. 85)։ ՄՁ. Թ. 1434 յիշատակարանին համաձայն, Յովհաննէս պտրք. կը վախճանի 1697ին և կը թաղուի